ՄԻ ԿԱՐԵՎՈՐ ԺՈՂՈՎ (ըստ Հակոբ Պարոնյանի)

Ժողովը վաղուց էր սկսվել, երբ պարոն Սմբուկյանը ներս մտավ, ատենապետի սեղանի վրա մի թուղթ թողեց և դուրս եկավ: Ատենապետը նամակը վերցրեց ու հայտարարեց.

- Այս նամակը պարոն Սմբուկյանը բերեց. ահա պարունակությունը.

`` Մի քանի շաբաթ է, սրտի մի սուր ցավ ինձ ստիպում է անկողնում մնալ: Սույն երկտողով պատիվ ունեմ հայտնելու, որ այսօրվա ժողովին չեմ կարող մասնակցել ``:

- Ի՞նչ է ձեր կարծիքը այս մասին, - հարցրեց ատենապետը:
- Շատ օրինավոր է, - ասացին մի քանի ներկաներ:
- Եվ սակայն Սմբուկյանը, որ հիվանդ է՝ անձամբ բերեց այդ նամակը, հետևաբար գրածը սուտ է, - ասաց մեկ ուրիշը:
- Այստեղ գալը կամ չգալը մեզ համար կարևոր չէ, - լսվեցին ձայներ, - մենք ունենք նրա նամակը, որի մեջ ասում է, թե հիվանդ է և պառկած անկողնում: Եվ քանի որ օրինավորությունը հարգելու համար անկողինը թողել, մինչև այստեղ եկել է, մեր պարտքն է շնորհակալություն հայտնել նրան և օրինավոր բացակաների մեջ արձանագրել նրա անունը:
- Բայց այս կերպով քաջալերում ենք ստախոսությունը, ասացին ուրիշներ, - և մի օր էլ կտեսնենք, որ ժողովի բոլոր անդամները կամ հիվանդ են կամ ճամփորդ:
- Ինքն ասում է, թե հիվանդ է:
- Մենք ասում ենք, որ հիվանդ չէ:
- Ձեր խոսքը արժեք չունի, որովհետև դուք իրավունք չունեք ուրիշի առողջությանը խառնվելու:

Ձայներ բարձրացան.

- Մենք բողոքում ենք այս նամակի պարունակության դեմ:

Ուրիշ ձայներ պատասխանեցին.

- Մենք չենք բողոքում:
- Սմբուկյանը հիվանդ չէ:
- Սմբուկյանը հիվանդ է՝ ըստ մեր ներքին կանոնադրության:
- Քվեարկել, քվեարկել, - գոռացին բոլոր կողմերից:

Ատենապետը խոսք առավ.

- Ինչպես տեսնում եք, Սմբուկյանի նամակը վիճաբանություն ստեղծեց: Եթե հավատանք նրա ստորագրությանը՝ նա հիվանդ է, պառկած անկողնում, իսկ եթե հավատանք մեր աչքերին՝ նա պառկած չէ, որովհետև քիչ առաջ այստեղ էր: Ուրեմն քվեարկության եմ դնում հետևյալ կետը. մենք պետք է հավատանք մեր աչքերի՞ն, թե՞ Սմբուկյանի ստորագրությանը:

Այս հարցը դրեցին քվեարկության և մեծամասնությամբ որոշեցին հավատալ ստորագրությանը:

- Անտանելի բան է, - բողոքեցին հակառակորդները, - այդ մարդը քիչ առաջ այստեղ եկա՞վ թե չեկա՞վ:

Ատենապետը քվեարկության դրեց այդ կետը նույնպես.

- Ով կողմնակից է, թե Սմբուկյանը այսօր այստեղ չեկավ, թող ձեռքը բարձրացնի:

Հաշվեցին և հարյուր գտան: Ատենապետը եզրակացրեց.

- Ժողովս մեծամասնությամբ որոշեց, որ Սմբուկյանը այսօր այստեղ չի եկել. և եթե եկած էլ լինի, պետք է մեծամասնության կամքի առջև խոնարհվել և հարգել նրա որոշումը: